# ՈՒ՞Ր ԵՆ ԿՈՐՉՈՒՄ ՄԵՐ ԺԱՄԵՐԸ...

Յուրաքանչյուր մարդ տանն անց է կացնում միջին հաշվով 12 ժամ: Քունը խլում է այդ ժամանակի 58 տոկոսը, անձնական հիգիենան՝ 4, ազատ ժամանակն ու սնվելը՝ 14 և 13, ուսմանն ու պարապելուն ընկնում է 2, իսկ երեխաներին խնամելուն՝ 3 տոկոս: Տնային աշխատանքը՝ ժամանակի 6 տոկոսն է կազմում:

Տարբեր շնչերից բաղկացած ընտանիքներում ժամանակը մեկ օրվա ընթացքում տարբեր է բաշխվում: Այն ընտանիքում, ուր փոքրահասակ երեխա կա, տղամարդու քնելուն մոտ 30 րոպե ավելի է ընկնում, քան կնոջը: Հավասարաչափ չի ծախսվում ժամանակը նաև ճաշ պատրաստելու պրոցեսի վրա, միայնակ և ընտանիքավոր կանանց մոտ: Առաջիններից այն խլում է 1 ժամ 45 րոպե, երկու հոգանոց ընտանիքում՝ 2 ժամ 17 րոպե, 3—4 հոգանոց ընտանիքում՝ 2 ժամ 30 րոպե: Սենյակներ հավաքելը, հագուստը կարգի բերելը, լվացքը կնոջը զբաղեցնում են 1 ժամ 15 րոպե: Ամեն մի երեխայի խնամքի վրա (ամուսնու և կնոջ ժամանակի ընդհանուր կորուստը) հարկավոր է լինում մեկական ժամ:

Ազատ ժամանակն իր ցանկությամբ օգտագործելու համար կնոջը մնում է մեկ ժամ, ամուսնուն՝ մոտ երկուսուկես անգամ ավելի:

Այս տվյալները առաջին հերթին խոսում են այն մասին, թե որքան անարդյունավետ է տանն անցկացրած ժամանակի զգալի մասը:

Չափազանց մեծ է տնային աշխատանքի վրա կորցրած ժամանակի տեսակարար կշիռը: Չորս հոգուց բաղկացած ընտանիքում ուտելիք պատրաստելու վրա կինը և ամուսինը միասին ծախսում են մեկ ժամ 30 րոպե: Այդ նույն ընտանիքում ամաններ լվանալու վրա ծախսվում է 25 րոպե, հագուստը մաքրելու և լվանալու վրա՝ 50, իսկ տունը մաքրելու վրա՝ 40 րոպե: Այսպիսով, ամեն օր տնային աշխատանքը ընտանիքից խլում է 3 ժամ 25 րոպե թանկագին ժամանակ, որը մեծ հաջողությամբ կարելի է օգտագործել երեխաների դաստիարակության, ուսման, հանգստի և այլ նպատակների համար:

## ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՐԴՅՈՔ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Բնակարանի ռացիոնալ նախագծման և կահավորման հետ մեծ նշանակություն ունի նաև կենցաղային տեխնիկան: Պատկերացրեք, թե ինչպես կփոխվի ամբողջ պատկերը, եթե մեքենայացվեն, իսկ հետո նաև ավտոմատացվեն տնային աշխատանքի բոլոր, համեմատաբար աշխատատար պրոցեսները:

Մասնագետների կարծիքով մեծ էֆեկտ կարող է տալ էլեկտրահաղորդակով աշխատող ունիվերսալ խոհանոցային մեքենայի գործածությունը: Մսի և բանջարեղենի մշակման, ինչպես նաև մի քանի այլ կերակրատեսակ պատրաստելու վրա կորցրած ժամանակը կարելի է կրճատել 15 անգամ...

Տնային աշխատանքի անբաժանելի մասն է կազմում բնակարան մաքրելը, որը մինչև այժմ շատ թույլ է մեքենայացված: Փոշեծծիչն ինչպես գիտեք, մաքրում է միայն արդեն նստած փոշին: Այնինչ հայտնի են նաև ավելի կատարելագործված սարքեր, որոնք փոշին որսում են ուղղակի օդից: Առանձնապես գրավիչ է ուլտրաձայնի օգնությամբ փոշին մաքրելու գաղափարը: Այս և նման օգնականների կիրառումով մեր կենցաղում (նախնական հաշիվներով) մոտ 4 անգամ կկրճատվի բնակարանը մաքրելուն հատկացված ժամանակը:

Արդեն ժամանակն է նոր կառուցվող բնակարաններում ստեղծելու էժան և հարմար տնային «կոմբայններ», որոնք մի շարժիչով կարող են կատարել տնային բազմազան աշխատանք:

Յուրաքանչյուր ընտանիքում, այդպիսի ժամանակակից սարքավորման հաշվին օրվա ընթացքում տնտեսվում է 2,5, կամ մեկ տարվա ընթացքում՝ 900 ժամ...

Ուրեմն, կարելի՞ է տնտեսել մեր թանկագին ժամանակը: Կարելի՛ է...



digitised by A.R.A.R.@